ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ

Ս. թ. մարտի 25—29-ը Բաքվում ՍՍՀՄ ԳԱ պատմության բաժնի կոմպլեքսային պրոբլեմների գիտական խորհրդի, հատկապես «Կապիտալիզմի գենեզիսի» սեկցիայի նախաձեռնությամբ հրավիրվեց գիտաժողով, որի նպատակն էր քննել Անդրկովկասում կապիտալիզմի առաջացման և զարգացման հարցերը։ Գիտաժողովի աշխատանքներին մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Բաքվի, Երևանի, Թբիլիսիի և Գրոզնու գիտահետազոտական ինստիտուտների աշխատողներ։ Գիտաժողովում լսվեց 14 զեկուցում և 5 հաղորդում։

Տնտեսական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Մ. Հ. Ալդուգը հանդես եկավ «Անդրկովկասում կապիտալիզմի գենեզիսի առանձնահատկություններն ու բնորոշ գծերը» զեկուցումով։ Նա գտնում է, որ ի տարբերություն Ռուսաստանի, որտեղ կապիտալիստական հարաբերությունները առաջացել են XVII դարում, Անդրկովկասում շնորհիվ պարսկա-թուրքական ետամնաց տիրապետության դրանք երևան են եկել ուշ՝ XIX դարի 30-ական թվականներին։ Ծայրերկրի միացումը Ռուսաստանին հսկայական նշանակություն ունեցավ վրացիների, հայերի ու ադրբեջանցիների առաջընթացի համար։ Այդ միացման շնորհիվ Անդրկովկասում առաջադիմում են արտադրողական ուժերը, աճում է կապրտալի նախասկզբնական կուտակումը, որը տեղի է ունենում առևտրի, վաշխառության, կապալառության և այլ եղանակներով։ Ուռճացած դրամատները իրենց միջոցները ներդնում են արտադրության մեջ, կառուցում են ձեռնարկություններ, մտնում բանվորներ և արտադրանքը ուղարկում վաճառքի։ Այդ բոլորի հետևանքով Անդրկովկասում տեղի է ունենում արդյունաբերական հեղաշրջում, որը և սկիզբ է դնում կապիտալիզմի դարաշրջանին։ Զեկուցողն, այնուհետև, նշեց, որ XIX դարի վերջին Անդրկովկասում ավարտվում է կապիտալիզմի ձևավորումը։ Նա ընդգծեց, որ Ռուսաստանի այս ծայրամասում կապիտալիստական մանուֆակտուրայի գոյությունն այնքան կարճատև է եղել, որ կարելի է նույնիսկ այն անտեսել։

Դատական գիտությունների թեկնածու Ա. Պ. Նովոսելցևը բնութագրեց Իրանի և Անդրկովկասի տնտեսական վիճակը XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին։ Նա ցույց տվեց, որ նշված ժամանակամիջոցում Իրանը գտնվում էր ֆեոդալական մասնատվածության այնպիսի պայմաններում, ուր կապիտալիզմի առաջացումը պարզապես անհնարին էր։ Իրանում և անդրկովկասյան երկրներում գոյություն ունեցող «քարխանաները» պետական ձեռնարկություններ էին և կապիտալիզմի հետ ոչ մի առնչություն չունեին. Անդրկովկասի պատմության նոր շրջանը սկսվում է XIX դարի սկզբներից, երբ այն միացվեց Ռուսաստանին և հնարավորություն ստացավ բռնելու կապիտալիզմի զարգացման ուղին։ Ավելի ուշ Անդրկովկասը ներքաշվեց համառուսական շուկա և XIX դարի կեսին տնտեսապես առաջ անցավ Իրանից։

Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Ս. Սումբաթզադեն հանդես եկավ «Արդյունաբերական կապիտալիզմը Ադրբեջանում» զեկուցումով։ Նրա կարծիքով Ադրբեջանում XIX դարի կեսերին կապիտալիզմի նախնական ստադիաները, այն է՝ տնային արդյունաբերությունը, արհեստն ու մանր ապրանքային արտադրությունը հասնում են զգալի հաջողությունների։ XIX դարի կեսերից ռուսական շուկայի ներգործության շնորհիվ արդյունաբերության որոշ ճյուղեր անցնում են կապիտալիզմի զարգացման մանուֆակտուրային, իսկ այլ ճյուղեր՝ գործարանային աստիճանին։ Երկրի տնտեսության մեջ առաջանում են նաև նոր ճյուղեր։ Արագ թափով առաջ է դնում նավթի, ապա պղծի և հումքի այլ տեսակների արտադրությունը։ Կապիտալիզմը թափանցում է նաև ոչակոդ արդյունաբերության բնագավառը և բարձրացնում աշխատանքի արտադրողականությունը։

Զեկուցողը հակադրվեց Ստալինի հանրահայտ այն կարծիքին, թե Ադրբեջանը չի անցել հասարակության զարգացման կապիտալիստական էտապը։ Ապա ցանկացավ ցույց տալ, որ կապիտալիստական հարաբերությունները Ադրբեջանում ավելի էին զարգացած, քան Վրաստանում,

որ Ադրբեջանը իր տնտեսական զարգացումով բարձր էր կանգնած համառուսաստանյան միջին մակարդակից։ Այդ ապացուցելու համար նա բերում է հետևյալ տվյալները. 1897-ի մարդա՝ամարով, Ադրբեջանում արդյունաբերական բնակչությունը կազմում է երկրի ողջ բնակչության 13,7 տոկոսը, իսկ Ռուսաստանում 1913 թ.՝ միայն 9 տոկոսը։

Ադրբեջանի ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ պրոֆ. Ա. Ն. Գուլիևը և պատմ. գիտ. դոկտոր Ի. Վ. Ստրիգունովը զեկուցեցին «Ադրբեջանում կապիտալիզմի դեներգիսի և զարգացման հարցի շուրջը» պրոբլեմի մասին։ Նրանք նշեցին, որ Ադրբեջանի միացումը Ռուսաստանին առաջադիմական նշանակություն ունեցավ նրա տնտեսական ու քաղաքական զարգացման համար։ XIX դ. կեսերին Ադրբեջանում արդեն հանդես են գալիս կապիտալիստական հարաբերությունների սպորադիկ ձևերը, իսկ 50—60-ական թվականներից այդ ձևերը վեր են ածվում որակի։ Բնորոշ է, որ կապիտալիստական կոոպերացիան, մանուֆակտուրան, հաճախ նաև գործարանը հանդես են գալիս միաժամանակ։ Իսկ դա պայմանավորված էր ռուսական շուկայի ներգործությամբ։ XIX դարի երկրորդ կեսին կապիտալիստական հարաբերությունները թափանցում են նաև գյուղը և այնտեղ ստեղծում են կապիտալիստական տնտեսաձև։

Պատմական գիտությունների թեկնածու Մ. Մ. Սամսոնաձեն հանդես եկավ «Կապիտալիզմի դեներգիսն ու զարգացումը Վրաստանի արդյունաբերության մեջ» թեմայով։ Ըստ նրա, Վրաստանում կապիտալիստական հարաբերությունները առաջացել են XVIII դարի երկրորդ կեսին, ուր կենտրոնացած մանուֆակտուրայի կողքին զարգանում է նաև ցրված մանուֆակտուրան, որը XIX դ. առաջին քառորդին դառնում է Վրաստանի արդյունաբերության ամենատարածված ձևը։ Շնորհիվ այդ տեղաշարժերի XIX դ. 20-ական թվականներից սկսում է ձևավորվել կապիտալիստական տնտեսաձև, որը ավարտվում է նույն դարի 50-ական թվականներին։ 70—80-ական թվականներին Վրաստանում տեղի է ունենում արդյունաբերական հեղաշրջում, որի հետևանքով կապիտալիստական հարաբերությունները դառնում են գերիշխող։

Տողերիս հեղինակը զեկուցեց «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը Հայաստանի արդյունաբերության մեջ» պրոբլեմի մասին։ Նշեց, որ կապիտալիստական հարաբերությունները Ռուսաստանի հայկական գաղթօջախներում (Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում և Նոր Նախիջևանում) առաջացան XVIII դարի երկրորդ կեսից և XIX դարի սկզբում։ Բայց բուն Արևելյան Հայաստանում պարսկա-թուրքական հետամնաց տիրապետության հետևանքով, այդ հարաբերություններն առաջացան ուշ՝ XIX դ. 50-ական, հատկապես 60-ական թվականներին։ Մանուֆակտուրաները, որոնք 30—40-ական թվականներին եզակի երևույթներ էին, 50, հատկապես 60-ական թվականներին ընդունում են մասսայական բնույթ և իրենց զգացնել են տալիս երկրի տնտեսական կյանքում։ Բայց Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ մանուֆակտուրային շրջանը կարճ է տևում՝ երկու-երեք տասնամյակ, որից հետո այսինքն՝ 80—90-ական թվականներից սկսվում է գործարանային շրջանը։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին կապիտալիստական հարաբերությունները երկրի արդյունաբերության մի շարք ճյուղերում արդեն տիրապետում են։ Սակայն այլ ճյուղերում տակավին շարունակում են գերակշռել արհեստներն ու նաև ապրանքային արտադրությունը։

Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ պրոֆ. Բ. Յ. Ախունդովը հանդես եկավ «Մոնոպոլիաների ձևավորումը Ադրբեջանի նավթային արդյունաբերության մեջ» թեմայով։ Նա նշեց, որ Բաքվում մոնոպոլիաներն առաջացան ոչ թե վերևից, ինչպես սխալ կերպով պնդում էին մի ժամանակ, այլ ամբողջ երկրի տնտեսական զարգացման պրոցեսում՝ ամենաարագ տեմպերով և XX դ. հենց սկզբին սկսեցին լճանալ։

Պատմական գիտությունների դոկտոր Դ. Գ. Օսմանովը զեկուցեց «Կապիտալիզմի դեներգիսը և զարգացման բնորոշ գծերը Դաղստանում» հարցի մասին և նշեց, որ Դաղստանում մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը տիրապետում էին նահապետական-ֆեոդալական հարաբերությունները, որոնց կողքին տեղ էին գտել նաև կապիտալիստական հարաբերությունները։ Արտադրության բուրժուական եղանակը, թեև դանդաղ, բայց անշեղորեն զարգանալով, կամաց կամաց արտամղում էր կյանքի հին ձևերը և թափանցում Դաղստանի աուլը։

Պատմական գիտությունների դոկտոր Է. Վ. Խաչատուրյանը հանդես եկավ «Բանվոր դասակարգի ձևավորումը Վրաստանում» թեմայով։ Նա ասաց, որ Վրաստանի արդյունաբերական ձեռնարկություններում և գյուղերում վարձու աշխատանքի պարբերաբար շահագործումը նկատվում էր տակավին XIX դ. 20—30-ական թվականներից։ Նույն դարի 60-ական թվականներին մշտական աշխատողների թիվը Վրաստանի արդյունաբերության տարբեր ճյուղերում արդեն կազմում էր 15—20 հազ., իսկ սեզոնայինների հետ մեկտեղ՝ 50—60 հազ.։ Սակայն բանվորների մեծ մասը աշխատում էր դեռ մանր ձեռնարկություններում։ 1897 թ. Վրաստանի արդյունաբերական բան-

վորները հաշվվում էին 120—130 հազ., որոնց 45—50 տոկոսը վրացիներ էին, 30—35 տոկոսը՝ հայեր, 10—15 տոկոսը՝ ռուսներ, իսկ մնացածը՝ այլ ազգություններ։

Պրոֆ. Մ. Ա. Իսմայիլովը զեկուցում կարդաց «Ապրանքային արտադրությունը և կապիտալիզմը Ադրբեջանի գյուղատնտեսության մեջ XIX դարում և XX դարի սկզբին» հարցի շուրջը և նշեց, որ ռուսական կապիտալիզմի զարգացումն ըստ լայնության արագացրեց Ադրբեջանի գյուղատնտեսության մեջ ապրանքային արտադրության առաջացումն ու վերելքը։ Շուկայական հարաբերությունների մեջ ներքաշվեցին հատկապես բամբակագործությունը, մետաքսագործությունը, խաղողագործությունը, այգեգործությունը և այլ ճյուղեր։ Սերտացան Ադրբեջանի առևտրական կապերը Անդրկովկասի և եվրոպական Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ, որի հետևանքով Ադրբեջանում արագորեն տեղի էր ունենում ապրանքային տնտեսության ներառումը կապիտալիստական տնտեսության։ Արդեն 60—70-ական թվականներից երկրի մի շարք շրջաններում գյուղատնտեսության վերոհիշյալ ճյուղերում ձևավորվում են կապիտալիստական հարաբերություններ։ Սակայն Ադրբեջանի լեռնային շրջաններում, ուր զբաղվում էին դերազանցապես անասնապահությամբ, այդ հարաբերությունները խիստ թույլ էին զարգացած։

Պրոֆ. Ի. Դ. Անտելավան և պատմ. գիտ. թեկնածու է. Ա. Օրջոնիկիձեն հանդես եկան «Մինչռեֆորմյան վրացական գյուղում բուրժուական հարաբերությունների զարգացման հարցի շուրջը» զեկուցումով։ Նրանք ջանում էին ցույց տալ, թե վրացական գյուղում բուրժուական բնույթի տեղաշարժեր սկսեցին նկատվել XIX դարի 30-ական թվականներից, իսկ նույն դարի 30—50-ական թվականներին ձևավորվել էր կապիտալիստական տնտեսաձևը։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Բենդիանիշվիլին զեկուցեց «Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը վրացական գյուղում 1865—1917 թվականներին» հարցի մասին և եզրակացրեց, որ գյուղացիական ռեֆորմը զգալիորեն նպաստեց վրացական գյուղի բուրժուական հարաբերությունների զարգացմանը։ Քայքայվում էին ֆեոդալական մնացորդները, աշխատավճար ռենտան արագորեն վեր էր ածվում դրամավճար ռենտայի, իսկ հողը ավելի ու ավելի էր ներքաշվում շուկայական հարաբերությունների մեջ։ Այդ բոլորի հետևանքով խորանում էր գյուղացիության դասակարգային շերտավորումը։ XX դ. սկզբին հարուստներն արդեն կազմում էին գյուղական բնակչության 4—5, միջակները՝ 35—40, իսկ աղքատները՝ 55—60 տոկոսը։ Կալվածատերերի մի մասը սկսել էր վարել կապիտալիստական տնտեսություն։

Տնտեսական գիտությունների դոկտոր Մ. Ն. Եզանյանը հանդես եկավ «Վարձու աշխատանքը տնտեսագործումը Հայաստանի գյուղատնտեսության մեջ» զեկուցումով։ Ելնելով այն սկզբունքից, թե կապիտալիզմը առաջանում է այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ արտադրության միջոցների սեփականատերերը անմիջապես իրենց են ենթարկում աշխատանքի պրոցեսը և արտադրությունը ընդունում է ապրանքային բնույթ, նա եզրակացնում էր, թե այդ ամենը Հայաստանում կատարվեցին գերազանցապես XIX դ. երկրորդ կեսից, հատկապես 60-ական թվականներից։ Սակայն Հայաստանում գյուղացիության քայքայումը նախ՝ չհասավ այն չափերին, ինչպիսին էր Ռուսաստանում, երկրորդ՝ այդ քայքայումը ավելի առաջ գնաց, քան կապիտալիստական տնտեսությունների զարգացումը։ Իսկ դրանց հիմնական պատճառը ցարիզմի գաղութային քաղաքականությունն էր ու գյուղացիական ռեֆորմի անցկացումը։ Ցարիզմը հողաշինարարական աշխատանքներին տվեց ձևական բնույթ, իսկ բաժնեհողերի փրկագնումները դարձրեց անիրագործելի։

Պատմական գիտությունների դոկտոր Ռ. Մ. Մազումեդովը և պատմական գիտությունների թեկնածու Խ. Խ. Ռամազանովը զեկուցեցին «Հետռեֆորմյան Դաղստանի աուլի սոցիալ-տնտեսական բնութագիրը» թեմայով։

Բիտաժողովում լսվեցին նաև մի շարք հաղորդումներ։ Այսպես, պատմական գիտությունների դոկտոր Ն. Պ. Էմիրովը հանդես եկավ «Առաջին մանածագործական ձեռնարկությունը Դաղստանում», պատմական գիտ. թեկնածու Ա. Գ. Ախվերդովան՝ «Մեքենաշինության առաջացումն ու զարգացումը մինչհեղափոխական Ադրբեջանում» (XIX դարի վերջին և XX դարի սկզբին) թեմաներով և այլն։

Պատմական գիտությունների թեկնածու Լ. Ա. Խանլարյանը «Տնտեսական որոշ տեղաշարժեր հայկական գյուղում 1870 թվականի գյուղացիական ռեֆորմի նախօրյակին» հաղորդման մեջ նշեց, որ չնայած ցարիզմի գաղութային ու ճորտատիրական քաղաքականությանը, այնուամենայնիվ 30—60-ական թվականներին հայկական գյուղում աճում էր աշխատանքի հասարակական բաժանումը, մեծանում էր քաղաքային բնակչության թիվը, արհեստավորները դառնում էին մանր ապրանքարտադրողներ, իսկ գյուղատնտեսությունը դուրս էր գալիս նատուրալ տնտեսության շրջանակներից և ներգրավվում շուկայական հարաբերությունների մեջ։ Ապրանքային արտադրության զարգացումը առաջ էր բերում գյուղում սոցիալական շերտավորում։

Զեկուցումներից և հաղորդումներից հետո գիտաժողովում ծավալվեց մտքերի փոխանակություն։

Մ. Հ. Ադոնցը համամիտ չէր այն զեկուցողների հետ, որոնք գտնում էին, թե Ադրբեջանը Ռուսաստանի միացման նախօրյակին եղել է Պարսկաստանից անկախ, ունեցել է ֆեոդալական պետականություններ, որոնք եղել են ինքնուրույն։ Նա չբաժանեց այն հեղինակների կարծիքները, որոնք դերագնահատեցին Ադրբեջանի սոցիալ-տնտեսական զարդացման մակարդակը։

Ռինձյունսկին ասաց, որ գյուղացիական ռեֆորմը չի կարելի համարել կապիտալի նախաուկզբնական կուտակման մեթոդներից մեկը, քանի որ գյուղացիների զրկումը հողից նպաստում էր ոչ թե կապիտալիզմի, այլ ֆեոդալիզմի զարգացմանը։ Գյուղատնտեսության ապրանքայնությունը որոշելու համար, ասաց նա, պետք է վերցնել ոչ թե երկրորդական ճյուղերը (այսինքն՝ բամբակագործությունը, խաղողագործությունը, ծխախոտագործությունը), այլ գլխավորները (հացահատիկային տնտեսությունն ու անասնապահությունը), քանի որ գյուղատնտեսության արտադրանքի մոտ 70 տոկոսը տալիս են հենց այդ ճյուղերը։ Վերջապես, նա նշեց, որ վարձու աշխատանքի ամեն մի օգտագործում չի կարելի կապիտալիզմ համարել։ Այն այդպիսի բնույթ է ընդունում, երբ մասսայական է դառնում, իսկ ստեղծած արժեքները ուղարկվում են վաճառքի։

Ի. Գ. Անտելավան ընդգծեց, որ Անդրկովկասի երկրներից յուրաքանչյուրն ունեցել է իր առանձնահատկությունները, որոնք որոշակի դեր են խաղացել կապիտալիզմի առաջացման ու զարդացման գործում։ Շնորհիվ այդ առանձնահատկությունների, Վրաստանում կապիտալիզմը չուտ է ձևավորվել, քան ծայրերկրի այլ վայրերում։ Հոտորը առարկում է այն հեղինակներին, որոնք Վրաստանը համեմատում էին Իրանի հետ։ Նա գտնում է, որ XVIII դ. Վրաստանը տնտեսապես ավելի էր զարդացած, քան Իրանը և ընդհանրապես առաջարկում է հարցը չպատկերացնել այնպես, թե Վրաստանում, մինչև Ռուսաստանին միանալը, ոչինչ չկար և ամեն տեսակի առաջխաղացում սկսվեց միացումից հետո։

Վ. Դ. Մոչալովը նշեց, որ կապիտալիզմի գենեզիսը լուսաբանելու համար անհրաժեշտ է ցույց տալ ապրանքային արտադրության զարդացումը և նրա վերածումը կապիտալիստական տնտեսության։ Անդրկովկասում, ժամանակագրական տեսանկյունից, կապիտալիզմի գենեզիսը ընդգրկում է ամբողջ XIX դարը։ Կապիտալիստական արտադրանքի ձևավորման մասին խոսելիս պետք է մի կողմ դնել տնտեսաձև հասկացողությունը և վեր հանել կապիտալիզմի կոոպերացիայի, մանուֆակտուրայի և գործարանային ստադիաները։ Ապա քննադատեց Ա. Ս. Սումբատզադեին, գտնելով, որ նա դերագնահատում է կապիտալիզմի զարդացման մակարդակն Ադրբեջանում։ Նա ստույգ չհամարեց այն տվյալները, որոնց համաձայն Ադրբեջանում քաղաքային բնակչությունը իբր թե կազմում էր 13,7, իսկ ամբողջ Ռուսաստանում 9 տոկոս։ Ցույց տվեց, որ Ա. Ս. Սումբատզադեն Ադրբեջանի համար վերցրել է թե բանվորների և թե՛ նրանց ընտանիք անդամների թիվը, իսկ Ռուսաստանի համար՝ միայն բանվորների թիվը։ Եթե Ռուսաստանի համար էլ վերցներ բանվորների ընտանիքների անդամների թիվը, ապա քաղաքային բնակչությունը կկազմի ոչ թե 9, այլ 18 տոկոս։ Ուրեմն կապիտալիզմի զարդացման մակարդակը Ադրբեջանում Ռուսաստանի միջին մակարդակից ցածր է եղել։

Տողերիս հեղինակը այն կարծիքը հայտնեց, որ որոշ զեկուցողներ գերագնահատում են կապիտալիզմի զարդացման մակարդակը Ադրբեջանում և Վրաստանում։ Մ. Մ. Սամսոնաձեի բերած տվյալները խոսում են ո՛չ թե կապիտալիստական մանուֆակտուրայի, այլ մանր ապրանքային արտադրության զարդացման մասին Վրաստանում XVIII դ. երկրորդ և XIX դ. առաջին կեսերին։ Գերագնահատումն արտահայտվում է նաև այն բանում, որ զեկուցողները գյուղում կապիտալիզմի մասին խոսելիս, ցույց էին տալիս համարյա բացառապես նրա զարդացած ձևերը և մոռանում սաղմնային, նախնական ձևերը։ Մինչդեռ Անդրկովկասի գյուղի համար բնորոշ են եղել կապիտալիզմի հենց ցածր ձևերը։ Ապա նա դտնում էր, որ Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների սաղմերը երևան են դալիս XIX դարի առաջին կեսին (Վրաստանում համեմատաբար շատ, Ադրբեջանում ու Հայաստանում քիչ չափերով), բայց նրանց իսկական զարդացումը սկսվում է XIX դարի երկրորդ կեսից, գլխավորապես 60-ական թվականներից։ Ռուսական կապիտալիզմի ազդեցության շնորհիվ Անդրկովկասի արդյունաբերության որոշ ճյուղեր կապիտալիզմի մանր ապրանքային ստադիայից անցնում են ուղղակի գործարանային ստադիային։

Ի. Յու. Ախունդովը խնդիր էր դնում, որ կապիտալիզմի գենեզիսի և զարդացման պրոբլեմները պարզաբանվեն ոչ այնքան կցկտուր տեղեկություններով ու վկայություններով, որքան վիճակագրական տվյալներով։ Կապիտալիզմը Ադրբեջանում, ըստ էության, սկսեց զարդանալ ետռեֆորմյան շրջանում, այսինքն՝ 60-ական թվականներից, իսկ 90-ական թվականներից նավթարդյունաբերության բնագավառում անցավ իմպերիալիզմին։ Նա համաձայն չէր Մ. Մ. Սամսոնաձեի

հետ, որը գտնում է, թե Վրաստանում կապիտալիստական հարաբերությունները շրջանցել են կոոպերացիան և անցել ցրված մանուֆակտուրային, առարկեց նաև մեր այն տեսակետը, ըստ որի կապիտալիստական մանուֆակտուրային արտադրությունը քայքայում է ֆեոդալիզմի հիմքերը։

Ա. Ն. Չիստոզվոնովը գտնում է, որ անհրաժեշտ է պարզաբանել կապիտալիզմի զարգացման տարբեր ստադիաները (կոոպերացիան, մանուֆակտուրան, գործարանը և մոնոպոլիան), պարզաբանել ժամանակագրական կարգը և վեր հանել համաշխարհային շուկայի հետ եղած կապերը։ Համաձայն չէ Ռինձյունսկու հետ գյուղացիական ռեֆորմի հարցում և գտնում է, որ այն որոշ չափով հանդիսանում էր կապիտալի նախասկզբնական կուտակման մեթոդներից մեկը. առարկում է նաև Վ. Դ. Մոչալովին տնտեսաձևի հարցում և նշում, որ կապիտալիստական հարաբերությունների բացի եղել են նաև տնտեսաձև ու ֆորմացիա, գտնում, որ կապիտալիստական հարաբերությունները կարող են անցնել մանր ապրանքային ստադիայից անմիջապես գործարանային աստիճանին, շրջանցելով մանուֆակտուրան։ Կանգ է առնում վարձու աշխատանքի շահագործման վրա և կարևոր համարում պարզել, թե կյանքի ո՞ր բնագավառում էր այն կիրառվում՝ ընտանիքո՞ւմ, թե արտադրության մեջ, ստեղծո՞ւմ էր արդյոք հավելյալ արժեք։

Է. Վ. Խոջաշտրյան նշում է, որ նախապես պետք է պարզել գենեզիս հասկացողությունը՝ արդյոք այն կապիտալիստական հարաբերությո՞ւն է, թե տնտեսաձև։ Նա համամիտ է այն հեղինակների հետ, որոնք գտնում են, թե բուրժուական արտադրության եղանակը անցել է կապիտալիստական հարաբերությունների, տնտեսաձևի և ֆորմացիայի էտապները։ Ապա նշում է, որ Վրաստանում XVIII դ. երկրորդ կեսից հանդես են գալիս կապիտալիստական հարաբերություններ կամ սաղմեր, XIX դ. 30-ական թվականներից՝ տնտեսաձև, իսկ 60-ական թվականներից՝ ֆորմացիա. Նա պնդում է, որ չպետք է նույնացնել կապիտալիզմն ու մեքենայական արտադրությունը, քանի որ կապիտալիզմը կարող է հանդես գալ նաև առանց մեքենայական արտադրության։ Կապիտալիզմի գենեզիսը ցույց տալու համար պետք է անդրադառնալ նաև վերնաշենքային երևույթներին։

Ա. Ն. Գույիևը համամիտ չէր Նովոսելցևի հետ, որը գտնում է, թե Ադրբեջանի միացումը Ռուսաստանին նպաստեց թուրքալեզու տարրերի ձուլմանը ադրբեջանցիների հետ և դարձրեց այդ ժողովրդին ավելի միասնական։ Ընդհակառակը, միացումը մասնատեց ադրբեջանական ժողովրդին, թողնելով նրա մի մասը Պարսկաստանի տիրապետության տակ։ Նա համամիտ չէր նաև այն հարցում, որ իբր թե ադրբեջանցիների մեծ մասը քոչվորներ ու կիսաքոչվորներ էին։ Ապա քննադատում էր Եգանյանին, որը ժխտում է Անդրկովկասում գյուղացիների կախվածության փաստը կալվածատերերից պարսկական տիրապետության տարիներին։ Ա. Ն. Գույիևը համաձայն չլինելով նաև այն հեղինակների հետ, որոնք գտնում են, թե Անդրկովկասի, հատկապես մահմեդական անգվածների համար բնորոշ է եղել ստրկատիրական տնտեսաձևը, նշում է, որ Ադրբեջանում եղել է ոչ թե տնտեսաձև, այլ ստրկության տարրեր։ Առարկում է Բ. Յու. Ախունդովին՝ Ստալինի հանրահայտ դրույթը՝ Ադրբեջանի մասին լիովին ժխտելու հարցում և գտնում է, որ այդ դրույթը Ադրբեջանի բնակչության գզալի զանգվածի համար ճիշտ էր։ Զարմանք է հայտնում, որ որոշ հեղինակներ բանն այնպես են ներկայացնում, թե կարծես Ադրբեջանում չեն եղել նահապետական ու ֆեոդալական հարաբերություններ։ Ա. Ն. Գույիևը խստորեն քննադատեց Ա. Ս. Սումբատզադեին այն բանի համար, որ վերջինս փորձում էր գերագնահատել Ադրբեջանի տնտեսական զարգացման մակարդակը։ Նա տրամաբանորեն հարցնում էր, որ եթե Ադրբեջանը համառուսական միջին մակարդակից բարձր էր, հապա ինչո՞ւմն էր արտահայտվում նրա գաղութային վիճակը։

Ն. Ի. Պավլենկոն գտնում է, որ Անդրկովկասում զարգացող կապիտալիզմը՝ ըստ էության ռուսական կապիտալիզմ էր և սխալ կլիներ համարել այն վրացական, ադրբեջանական կամ հայկական։ Վարձու աշխատանքի շահագործումը դեռ կապիտալիզմ չէ, այն կապիտալիզմ է դառնում այն ժամանակ, երբ ստեղծում է հավելյալ արժեք։ Պետք է նկատի ունենալ, որ ինչպես ապրանքային արտադրությունը, նույնպես և վարձու աշխատանքը կարող են սպասարկել նաև ֆեոդալիզմին։ Պետական ձեռնարկությունները ոչ մի ընդհանուր բան չունեն կապիտալիզմի հետ անգամ այն դեպքում, եթե բանում են վարձու աշխատանքով, քանի որ նրանք արտադրում են ոչ թե շուկայի, այլ պետության համար։ Նա համամիտ չէ Ի. Գ. Անտելավայի հետ, որը XIX դ. 30—50-ական թվականները Վրաստանի պատմության մեջ համարում է կապիտալիստական տնտեսաձևի շրջան և առաջարկում է խորանալ կալվածատերերի բյուջեների ուսումնասիրության մեջ։ Առարկում է հատկապես Մ. Մ. Սամսոնաձեին, որը XVIII դ. երկրորդ կեսը համարում է Վրաստանի պատմության մեջ մանուֆակտուրային արտադրության և հետևաբար կապիտալիստական արտադրության եղանակի սկիզբ։ Կասկած է հայտնում, որ Վրաստանում այդ ժամանակաշրջանում լինեն ցրված մանուֆակտուրա և նշում է, որ ինքը Ռուսաստանում XVII—XVIII դա-

բերում չի հայտնաբերել նման մանուֆակտուրա։ Ցրված մանուֆակտուրան սովորաբար հանդես է գալիս աշխատանքի հասարակական ավելի խորը բաժանման և ապրանքային արտադրության ավելի բարձր զարգացման աստիճանում։

Վ. Պ. Վոլոբուևը նշեց, որ Հայաստանի և Ադրբեջանի համար բնորոշ են եղել ֆեոդալական հարաբերությունների լճացած ձևերը։ Այդ պատճառով էլ պարսկական տիրապետության ժամանակ անհնարին էր կապիտալիզմի զենեզիսը։ Փոքր ինչ այլ են եղել Վրաստանի պայմանները, բայց մեր վրաց կոլեգաների բերած տվյալները տակավին չեն համոզում, որ XVIII դարից կամ XIX դարի առաջին կեսին Վրաստանում կապիտալիզմ է զարգացել։ Անդրկովկասում կապիտալիզմի առաջացումը սերտորեն կապված է ռուսական կապիտալիզմի զարգացման հետ։ Հնարավոր է, որ Անդրկովկասում, հատկապես Վրաստանում XIX դարի առաջին կեսին եղել են կապիտալիստական ձեռնարկություններ։ Բայց բուրժուական հարաբերությունների զարգացումը որոշվում է ոչ թե ձեռնարկությունների թվով կամ վարձու աշխատանքի քանակով, այլ արտադրության բնույթով և հասարակության սոցիալ-տնտեսական կառուցվածքով։ Նա համամիտ չէ Ի. Գ. Անտելավայի այն կարծիքին, թե կապիտալիստական տնտեսաձևը Վրաստանում ստիպեց ֆեոդալիզմին վերացնելու ճորտատիրական իրավունքը։ Դա համառուսաստանյան նշանակություն ունեցող մի ակտ էր, որից չէր կարող զերծ մնալ Վրաստանը։

Ա. Ս. Սումբատզադեն ընդունեց իր հասցեին ուղղված այս քննադատությունը, որ ինքը գերագնահատել է Ադրբեջանի տնտեսական զարգացման մակարդակը։

Անդրադառնալով կապիտալիզմի առաջացման ու զարգացման հարցերին, նշեց, որ հասարակական այդ ֆորմացիան Ադրբեջանում և Հայաստանում սկսում է զարգանալ հիմնականում XIX դարի երկրորդ կեսից, հատկապես 60-ական թվականներից։ Իրերի վիճակը, ըստ էության, այդպիսին է եղել նաև Վրաստանում, բայց վրացի ընկերները համաձայն չեն դրան։ Սումբատզադեն գտնում է, որ XIX դարի 30—40-ական թվերին Անդրկովկասում եղել է տնտեսական առաջընթաց, բայց դա ոչ թե կապիտալիզմի, այլ ապրանքային արտադրության զարգացումն էր։ Նա, այնուհետև, համաձայնեց Մ. Ադոնցի և Ա. Համբարյանի հետ, որոնք գտնում էին, որ Անդրկովկասում կապիտալիզմի մանուֆակտուրային շրջանը կարճ է եղել, ապա նշեց, որ այսուհետև կապիտալիստական հարաբերությունների զարգացումը պետք է ուսումնասիրել նաև մանր ձեռնարկություններում։

Գիտաժողովում ելույթներով հանդես եկան նաև Վ. Պավլովը, Ն. Կուզնեցովան, Է. Օրջոնիկիձեն և ուրիշներ։

Վերջում գիտաժողովն ընդունեց բանաձև։ Արձանագրելով սովետական պատմաբանների ու տնտեսագետների ձեռք բերած նվաճումները կապիտալիզմի զենեզիսի ու զարգացման պրոբլեմների մշակման բնագավառում, բանաձևում նշվում է, որ տակավին թույլ են ուսումնասիրված կապիտալի նախասկզբնական կուտակման, առևտրի զարգացման, արդյունաբերական կապիտալի ձևավորման, արհեստային արտադրության, բուրժուական հասարակության դասակարգերի ձևավորման հարցերը։

Գիտաժողովը որոշեց ստեղծել մշտական հանձնաժողով և հանձնարարել նրան շարունակելու «Կապիտալիզմի զենեզիսը Անդրկովկասում» պրոբլեմների մշակումը։

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր